

## 2014 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

ՀՀ կառավարության գերակա խնդիրների ծրագրի շրջանակներում (նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի դերի կարևորում, տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորման գործընթացի կազմակերպում) արդեն իսկ Երևանի վարչական շրջաններում, ՀՀ Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Կոտայքի, Տավուշի, Լոռու, Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Շիրակի մարզերի համայնքներում իրականացվել են «Սպորտլանդիա-2014» մարզական մասսայական միջոցառումը նախադպրոցական երեխաների և դպրոցական 5-6-րդ դասարանների աշակերտների շրջանում: Միջոցառումը անցկացվել է 2 փուլով՝ համայնքային և մարզային: «Սպորտլանդիա-2014» մարզական մասսայական միջոցառմանը մասնակցել են շուրջ 5700 երեխա: Մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության կողմից մշակվել է սոցիոլոգիական հետազոտության հարցաթերթիկ՝ երեխաների շրջանում սպորտային կողմնորոշման նպատակով, որի արդյունքներն ամփոփվել են տարվա վերջում:

**2014 թվականի նոյեմբերի 3-5-ը** Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում անցկացվել է «Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր»-ի եզրափակիչ մրցումները:

**2014 թվականի սեպտեմբերի 14-ին** ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից մշակված ծրագրի համաձայն՝ Սևան քաղաքում անցկացվել է մարզական փառատոն տարբեր մարզաձևերից:

**2014 թվականի սեպտեմբերի 9-ին** ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Գաբրիել Ղազարյանի հանձնարարությամբ նախարարության դահլիճում կազմակերպվել է հանդիպում Հայաստանի ազգային փոքրամասնությունների և հաշմանդամային 3 կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որին մասնակցել է նաև ՀՀ Նախագահի աշխատակազմի ներկայացուցիչ՝ ազգային փոքրամասնությունների խնդիրները համակարգող Նաիրա Գուլյանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են 2015 թվականի փետրվար-մարտ ամիսներին նախատեսվելիք մարզական միջոցառումների կազմակերպումը՝ առաջինը՝ ազգային փոքրամասնությունների և երկրորդը՝ հաշմանդամային կազմակերպությունների անմիջական մասնակցությամբ:

**2014 թվականի հուլիս-օգոստոս** ամիսներին ՀՀ սփյուռքի նախարարության «Արի տուն» ծրագրի շրջանակներում կազմակերպվել և անցկացվել են տարբեր տեսակի զանգվածային մարզական միջոցառումներ, որի ընթացքում ծրագրի մասնակիցները միմյանց հետ մրցել են մի շարք մարզաձևերում: Հաղթողները և մրցանակակիրները պարգևատրվել են նախարարության հավաստագրերով:

**2014 թվականի հուլիսի 21-27-ը** Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում կայացել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի եզրափակիչ փուլը, որտեղ ներկա է գտնվել Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը: ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի բանավոր կարգադրության համաձայն այս տարի մրցույթի եզրափակիչ փուլին մասնակցել են նաև ՀՀ մարզերից, ԼՂՀ-ից և Երևան քաղաքի վարչական շրջաններից հաշմանդամ ունեցող ընտանիքները (հայրը կամ մայրը

անվասայլակով): Եզրափակիչ փուլին մասնակցել են 144 ընտանիքներ՝ թվով 432 մարդ և հաշմանդամություն ունեցող 16 ընտանիքներ՝ թվով 48 մարդ: Միջոցառման մասնակից ընտանիքներն ըստ տարիքային չորս խմբերի, ինչպես նաև հաշմանդամ ունեցող ընտանիքները պարզևատրվել են ՀՀ նախագահի պատվոգրերով և դրամական մրցանակներով: Դրամական մրցանակներով պարգևատրվել են նաև առանձին մարզաձևերում մրցանակային 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր զբաղեցրած ընտանիքները, ինչպես նաև գավաթներով պարգևատրվել են թիմային հաշվարկով 1-ին, 2-րդ 3-րդ մրցանակային տեղերը զբաղեցրած ՀՀ մարզերը: Մինչ մրցույթի եզրափակիչ փուլը հունիսի 1-15-ը ՀՀ մարզերի քաղաքային համայնքներում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 7 շրջաններում և Երևան քաղաքի վարչական շրջաններում անցկացվել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի 1-ին փուլը, որին մասնակցել են 2067 մարզական ընտանիքներ, հունիսի 18-ից մինչև հուլիսի 1-ը տեղի է ունեցել միջոցառման 2-րդ փուլը, որին մասնակցել են 1-ին փուլում հաղթած ընտանիքները:

**2014 թվականի հունիսի 13-ին** նախարարությունում «Ֆիզկուլտուրային առողջարարական համալիր» (նախկին՝ ՊԱՊ) ծրագրի ստեղծման նպատակով անցկացվել է առաջին խորհրդակցությունը, որի նպատակն էր ֆիզիկական կուլտուրայի միջոցով նպաստել բնակչության առողջության բարելավմանը, ֆիզիկական որակների՝ ճկունության, դիմացկունության, ճարպկության, ֆիզիկական ուժի զարգացմանը, պահպանմանը և դրանց հետագա կատարելագործմանը:

**2014 թվականի մայիսի 23-24-ը** ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության հետ համատեղ, Աբովյանի քաղաքապետարանի աջակցությամբ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում 5-րդ անգամ անցկացրել է արդեն ավանդական դարձած զանգվածային մարզական միջոցառումը, որին մասնակցել են դատապարտյալ կանայք և անչափահաս տղաներ:

**2014 թվականի մայիսի 21-ին** ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունում անցկացվել է մասսայական սպորտին ու առողջ ապրելակերպին նվիրված խորհրդակցություն՝ 2014 թվականի մասսայական մարզական միջոցառումներին առնչվող հարցերը Երևան քաղաքի և մարզերի սպորտի պատասխանատուների հետ քննարկելու նպատակով:

**2014 թվականի մայիսի 14-ին** ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության նախաձեռնությամբ Հայաստանի մանկատների և գիշերօթիկ դպրոցների մասնակցությամբ իրականացվել է «Սպորտլանդիա-2014» մարզական միջոցառումը, որի աջակիցներն էին «Վորլդ Վիժեն» կազմակերպության Մանկական զարգացման հիմնադրամը, «Զանգակ» հրատարակչությունն ու Հայաստանի շախմատի ակադեմիան: Մասնակիցները պարգևատրվել են նախարարության հավաստագրերով և «Վորլդ Վիժեն» կազմակերպության կողմից տրամադրված հուշանվերներով: